



Փ Ա Ր Ո Մ Paros

ISSUE 94 MAY / ԹԻՒ 94 ՄԱՅԻՍ 2025

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

Թեմական Լուրեր

Եշ., 1 Մայիս – Որպես ներկայացուցիչ Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի, Արժանապատիւ Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեան, ընկերակցութեամբ Արժանապատիւ Տեր Աշոտ Քահանայ Աբրահամեանի ներկայ գտնուեցաւ Ֆրանսիս Պապի հոգեհանգստեան արարողութեան, Սիտնիի Ս. Մէրիի տաճարին մէջ։ Քահանայ հայրերը իրենց



ցաւակցութիւնը յայտնեցին Սիտնիի Կաթօլիկ Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Անթընի Ֆիշըր Արքեպիսկոպոսին։



Ուրբ., 2 Մայիս – Դարձեալ, որպէս ներկայացուցիչ Գերաշնորհ Տեր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի, Արժանապատիւ Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեան ներկայ գտնուեցաւ Ս. Մէրիի տաճարին մէջ Most Reverend Anthony Gerard Percy-ի եպիսկոպոսական ձեռնադրութեան, ձեռամբ Սիտնիի Կաթօլիկ Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Անթընի Ֆիշըր Արքեպիսկոպոսին։ Տեր Հայրը շնորհաւորեց նորած եպիսկոպոսը եւ Վարդան Սրբազան Հօր օրհնութիւնները փոխանցեց Ֆիշըր Արքեպիսկոպոսին։

Կիր., 4 Մայիս – Առաւօտուն մատուցուած հոգեպարար Սուրբ եւ Անմահ Պատարագէն մի քանի ժամ ետք, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Էտկարեան Սրահին մէջ տեղ գրաւած էին ութսունի շուրջ գրասէր հայորդիներ, ուր տեղի ունեցաւ մշակութային ձեռնարկ կազմակերպութեամբ Համագգայինի Գրական-Գեղարուեստական Յանձնախումբին։ Ձեռնարկին իրենց ներկայութիւնը բերին Արժ Տեր Միւռն Քահանայ Աւետիսեան, Հոգեւոր Հովիւ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ, Թեմական Խորհուրդի փոխատենապետ Պրն Ստեփան Գրգեաշարեան, Համագգայինի Շրջանային եւ Կեդրոնական Վարչութեանց ներկայացուցիչներ, տարբեր կազմակերպութիւններու, միութիւններու ներկայացուցիչ գրասէր անդամներ։ Ձեռնարկը ձօնուած էր Մայրերուն, իրենց օրը պանծացնելու միտումով։

Յանձնախումբի ատենապետուի Տիկին Լիլիկ Կոտոյեան բացատրութիւն տուաւ ձեռնարկին ընթացակարգին մասին, որմէ ետք, ներկաներէն ութ գրասէր անհատներ ընթերցեցին եւ



արտասանեցին ՄՕԲ նուիրուած բանաստեղծութիւններ, ստեղծելով գրական գեղեցիկ մթնոլորտ, որուն կարօտը ունէին բոլորը:

Արժանապատիւ Տէր Միւռն Քահանայ հայրը իր ասմունքով (Մայր իմ անուշ ու անգին) ապա երգով (Գազել) մեծապէս տպաւորեց ներկաները, իսկ Տիկին Նորա Պասթաճեան դաշնամուրի վրայ նուագեց «Մայրիկ» եւ «Մարտիկի Երգը» երգերուն նուագները:

Փարոսի խմբագրութիւնը կը գնահատէ Գրական -Գեղարուեստական Յանձնախումբի այս գեղեցիկ ձեռնարկը եւ կը յուսայ որ ապագային պիտի կազմակերպէ նորանոր նմանատիպ ձեռնարկներ:

Շբ., 10 Մայիս – Իսթրուտի "Memorial Park"-ին մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 110-ամեակի յիշատակի հաւաք կազմակերպուած Բայտի Քաղաքապետարանին կոմէ: Սոյն քաղաքապետութիւնը, որ երկիցս ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը, աւանդութիւն դարձուցած է այս հաւաքը:

Աւելի քան երկու հարիւր Հայ եւ ոչ Հայ քաղաքացիներ, Հայկական համարեա բոլոր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, պետական պաշտօնատարներ ներկայ եղան յուշահանդէսին, հաւաքուելով զօսայգիի Խաչքարին շուրջ: Թեմական Խորհուրդը ներկայացուց փոխատենապետ Պրն Ստեփան Գրգեաշարեան:

Հանդիսավար Պրն Սարգիս Ետէեան, որ երկար տարիներ ծառայած է որպէս Բայտի քաղաքապետարանի անդամ եւ քաղաքապետ, նաեւ մղիչ ուժը հանդիսացած Յեղասպանութեան ճանաչման գործընթացին եւ Խաչքարին



շուրջ աւանդական այս հաւաքներուն, կատարեց բացման խօսքը եւ շեշտեց կարեւորութիւնը այս եւ նման հաւաքներու, որոնց շնորհիւ վառ կը մնայ տխուր յիշատակը ցեղասպանութեանց եւ կը վերանորոգէ Հայուն պահանջատիրական կեցուածքը: Ան պահանջեց Աւստրալական Դաշնակցային Կառավարութենէն պաշտօնապէս ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը:

Խօսք առին Խորհրդարանի անդամներ Ժէրօմ Լաքսալ, Ճորտըն Լէյն, Բայտի քաղաքապետ Թրէնթըն Պրաուն, Հայ Դատի Յանձնախումբի անդամ Լարա Ֆերհատ եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան անդամ՝ Անթընի Կիւլվարդեան:

ՀՄԸՄ-ի Սկաւտներու ներկայութիւնը աւելի փայլք տուաւ հանդիսութեան:

Ծաղկեպսակներու զետեղման արարողութենէն ետք, Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան կատարեց օրհնութեան արարողութիւնը եւ Պահպանիչով փակուեցաւ այս յիշարժան հանդիսութիւնը:

Կիր., 11 Մայիս – Հովանաւորութեամբ թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանի եւ կազմակերպութեամբ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին, Միտնիի Չացուտ արուարձանի Քոնքորս շքեղ հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ աննախընթաց համերգ մը նուիրուած Շարլ Ազնաւուրի ծննդեան 100 ամեակին, «Մերսի Շարլ» խորագրով, ի ներկայութեան բազմահարիւր Հայ եւ ոչ Հայ արուեստասէրներու:



Այս առիթով, Հայրենիքին հրաւիրուած էր անուանի երգիչ եւ դերասան Հայկ Պետրոսեան, որդին դերասան Վարդան Պետրոսեանի: Անոր կ'ընկերակցէր իր նուագախումբը յանձինս երաժիշտներ Վահագն Հայրապետեանի՝ Դաշնամուր, Դաւիթ Քօթաբեանի Պաս Կիթառ, Արման Մնացականեանի՝ Հարուածային գործիքներ, Դանիէլ Մելքոնեանի՝ Շեփոր:

Այս մեծածախս ձեռնարկը կարելի պիտի չըլլար կազմակերպել եւ ներկայացնել արուեստասէր հասարակութեան առանց խումբ մը սրտցաւ հայորդիներու, յատկապէս Աւօ եւ Ճէքի Թեւանեանի եւ ընտանիքին: Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ կազմակերպող յանձնախումբը հաւաքաբար եւ անհատապէս, յանձինս Արժանապատիւ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Տիկնայք՝ Երեցկին Յասմիկ Համբարձումեանի, Վերա Քէշիշեանի, Վերա Իվանեանի, Ալիս Պաքլայի, Տիարք՝ Զաւէն Եաղլճեանի, Հերման Մահմուրի եւ Յարութ Օզճեանի:

Երեքշաբթի 13 Մայիսին, դարձեալ հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազանին, Սուրբ Յարութին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ երաժշտական երեկոյ նուիրուած Կոմիտասի վախճանման 90-ամեակին: Եկեղեցին լեցուած էր բազմա-հարիւր հայորդիներով, որոնք եկած էին ունկնդրելու Կոմիտասագէտ Հայկ Պետրոսեանը: Ան, շնորհիւ Կոմիտասի շարականներուն եւ ժողովրդային երգերուն, կարողացաւ հանդիսատեսը ներշնչել հոգեւոր եւ ազգագրա-ժողովրդական երաժշտութեամբ:

Գնահատելի ձեռնարկ:



Գշ., 20 Մայիս – Իր հերթական ժողովին Թեմական Խորհուրդը լսեց Վարդան Սրբազան հօր գործունէութեան զեկուցումը, ինչպէս նաեւ երեք եկեղեցական հայրերու՝ Տէր Աւետիսի, Տէր Միւռնի եւ Տէր Խաչերի գործունէութեանց զեկույցները:

Ժողովը վաւերացուց երեք ծուխերուն մէջ անդամական ընդհանուր ժողովներուն նորընտիր ծխական խորհուրդները: Ժողովը տեղեկացաւ Առաջնորդ հօր վիզայի յառաջընթացին մասին, նաեւ խորհրդակցութեան նիւթ դարձուց յետաձգուած Թեմական Պատգամաւորական Ժողովին գումարումը եւ օրակարգը:

Ժողովը լսեց հաշուական տեղեկագիրն ու Թեմական Պատգամաւորական Ժողովին ներկայացուելիք նախահաշիւը:

Ժողովը նաեւ տեղեկացաւ Արարատ Մշակութային Կեդրոնի վերջին երեք ամիսներուն տարած աշխուժ աշխատանքին մասին եւ կատարեց առաջարկներ եւ գնահատումներ:

Դշ., 28 Մայիս – Ամէն ամսուան վերջին Չորեքշաբթի երեկոյեան տեղի կ'ունենայ առցանց լսարանական դասախօսութիւն: Այս ամսուան վերջին Չորեքշաբթին գուգադիպեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 107րդ տարեդարձին՝ Մայիս 28-ին: Այդ առիթով, թեմիս Առաջնորդ Գերշ Տէր Վարդան Եպս Լաւասարդեանի միջոցաւ դասախօս հրաւիրուեցաւ Գերշ Տէր Մուշեղ Եպս Բաբայանը: Նիւթ՝ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Անոր



Մասնակցությունը Հայ Ազատագրական Պայքարին», ձօնուած վերանորոգուած Մայր Տաճարին եւ Առաջին Հանրապետութեան 107րդ Ամեակին: Նիւթ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ անոր մասնակցությունը Հայ ազատագրական պայքարին, ձօնուած վերանորոգուած Մայր Տաճարին ինչպէս նաեւ Առաջին Հանրապետութեան:

Դասախօսութենէն մի քանի օր առաջ, Երկու Եպիսկոպոս Հայրերը միասնաբար պատրաստած էին տեսերիզ մը, որ ցուցադրուեցաւ 50-ի մօտ ակնդիրներուն: Մայր Տաճար այցելող հաւատացեալներու յարուցած աղմուկը տեսերիզին ձայնային որակը քիչ մը վար բերած էր, հետեւաբար, Վարդան Սրբազան յաւելեալ բացատրություն տուաւ Մայր Տաճարի մասին: Բմացանք թէ ինչ մակարդակի հասած էր մաշումը տաճարին եւ հսկայ վտանգ կը սպառնար անոր փլուզման, եթէ այդ չնկատուէր: Նաեւ



բացատրուեցաւ թէ ինչպիսի բժախնդրութեամբ Վեհափառ Հայրապետը ամբողջ 5 տարի հետեւած էր վերանորոգման աշխատանքներուն եւ, շնորհիւ Հայ մասնագէտներու եւ վարպետներու, կարողացած էր իրագործել նպատակադրուած կառոյցը:

Մինչ Վարդան Սրբազան բացատրություններ կու տար, Մուշեղ Սրբազան կը վերադառնար Սարտարապատէն, ուր ընկերակցած էր Նաթան Արք Յովհաննիսեանի գլխաւորած Սարտարապատի յուշահամալիր այցելող շքախումբին: Մուշեղ Սրբազան հակիրճ պատմականը կատարեց Սարտարապատի, Ղարաբիլիսայի (Վանաձոր) եւ Բաշ Ապարանի (Ապարան) մէջ 107 տարի առաջ մղուած ճակատամարտերուն եւ տարուած յաղթանակներուն: Ապա ան պատասխանեց բազում եւ բազմաբնոյթ հարցերուն, որոնք տրուեցան ակնդիրներուն կողմէ:

Սրբազան հօր բացատրությունները ուսանելի շատ գիտելիքներ կը պարունակէին իրենց մէջ: Հետաքրքրական էր գիտնալ թէ մեր 30 հազար քառակուսի քիլոմէթր երկրին մէջ գոյություն ունէին 20000 յուշարձաններ (եկեղեցի, մատուռ, բերդ, խաչքար եւլն), որոնցմէ միայն 430-ը Էջմիածնի խնամքին յանձնուած են, մնացեալքը՝ պետութեան խնամքին ներքոյ են: Այլ բան որ իմացանք՝ Եունեսքոյի պահպանութեան տակ գտնուող Մայր Տաճարի վերանորոգման համար Եունեսքոն ոչ մէկ գործնական օժանդակություն չէ բերած, ո՛չ մասնագիտական, ո՛չ նիւթական:

Հետեւաբար, յաւելեալ հետաքրքրական մանրամասնություններ իմանալու համար, խորհուրդ կու տանք ակնդրել կցուած Եութիւպեան յդումը: Բարի ակնդրություն կը մաղթենք մեր ընթերցողներուն:

<https://www.youtube.com/watch?v=haUVn5w36vo>

Դասախօսութեան սկիզբը, հանդիսավար Նշան Սրկ Պասմաճեան, յետ Վարդան Սրբազանի բացման աղօթքին, ներկայացուց օրուան դասախօսը եւ կարդաց անոր կենսագրությունը, զոր կը ներկայացնենք ստորեւ:

Աւագանի անունով Նելսոն, Մուշեղ Սրբազան ծնած է 1978-ին Գորիսի շրջանի Տաթեւ գիւղը:

Նախնական ուսումը գիւղի վարժարանին մէջ, ապա 1994-ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարան, զոր կ'աւարտէ 2000-ին եւ կը ձեռնադրուի Սարկաւագ:



2000-2001, կը հետեւի Հայաստանի Ամերիկեան համալսարանի «Կառավարման դասընթացներ ճեմարանականներու համար» ծրագրին: 2001 Սեպտեմբեր-Դեկտեմբեր կ'ուսանի Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի «Պոստէ» Էքիւմենիք Համալսարանին մէջ, Ժընև, Զուիցերիա:

2002-ին կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ եւ մինչեւ 2004 կ'ուսանի Ռուսաստանի Ուղղափառ Եկեղեցոյ Մոսկուայի հոգեւոր ակադեմիային մէջ, ուր կը պաշտպանէ Աստուածաբանական գիտութիւններու թեկնածուի իր աւարտաճառը՝ «Ս. Գրիգոր Նարեկացու կրօնաբարոյական հայացքները» թեմայով:

2004ին կը վերադառնայ Մայր Աթոռ, եւ Գեորգեան հոգեւոր ճեմարանի մէջ կը դասաւանդէ Հայ Եկեղեցոյ պատմութիւն: 2006-2007 կ'ուսանի Հռոմի Պապական Սալեզեան համալսարանին մէջ:

2007-էն մինչեւ օրս Մայր Աթոռի վարչատնտեսական հարցերը ղեկավարող անձ է եւ 2009-էն ի վեր կը վարէ Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրէնի պաշտօնը:

Դասախօսութիւնը իր աւարտին հասաւ Վարդան Սրբազանի շնորհակալական եւ երախտագիտական խօսքերով եւ փակման աղօթքով:



Եշ., 29 Մայիս – Կազմակերպութեամբ Australian Institute for Holocaust and Genocide Studies-ի, նահանգային Խորհրդարանին մէջ Հայոց Ցեղասպանութեան յիշատակին նուիրուած Խաչքարին մօտ տեղի ունեցաւ օրհնութեան արարողութիւն եւ Ծաղկեպսակներու զետեղում:

Օրհնութեան արարողութիւնը կատարեցին Արժանապատիւ Քահանայ Հայրեր՝ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, Տէր Միւռոն Քահանայ Աւետիսեան եւ Տէր Աշոտ Քահանայ Աբրահամեան: Ներկայ էին հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ ինչպէս նաեւ պետական ղեմքեր, յատկապէս Խորհրդարանի անդամներ՝ Թիմ Ճէյմս, Քարիշմա Քալիանտա, Նաթան Հակարթի, Սթիվըն Լօրընս, Բոպին Փրէսթըն, Ճորտըն Լէյն եւ Ճաքի Մընրօ:

Արարողութենէն ետք, Խորհրդարանի հանդիսասրահին մէջ, ցեղասպանագէտ Փրոֆ Պրուս Սքէյթ տպաւորիչ դասախօսութիւն մը տուաւ՝ ‘With Courage and Compassion: Anzac and Armenia’ նիւթին մասին:

Լուրեր Ծուխերէն

Ուէնթուրըրթփիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի



Ուրբաթ 2 Մայիս, եւ յաջորդաբար Մայիսի իւրաքանչիւր Ուրբաթ երեկոյ, տեղի ունեցաւ Ս. Աստուածածնի փառաբանանքի արարողութիւն Տէր Միւռնի կողմէ, որուն հետեւեցան Սուրբգրոց սերտողութեան նիստեր:

Կիրակի 4 Մայիսին պատարագեց եւ քարոզեց Արժ Տէր Պարթեւ

Աւագ Քահանայ Գարագաշեան: Թող Աստուծոյ օրհնութիւնը անպակաս մնայ Տէր Պարթեւի վրայէն:

Ուրբաթ 9 Մայիս – Նախքան եկեղեցական արարողութիւն, երիտասարդներու հետ Սուրբգրոց սերտողութեան ընթացքին, Տէր Միւռն բացատրեց թէ ինչ զըրուած է Հին եւ Նոր Կտակարաններու մէջ միասեռականութեան մասին:

Նոյն օրը, Տիկնանց Յանձնախումբը եւ Երեցկիներ ներկայ գտնուեցան ՀՕՄ Արաքս մասնաճիւղի Բանոյեան Կեդրոնին մէջ կազմակերպած Մայրերու Օրուան հաւաքին:



Շաբաթ 10 Մայիսին, ընդառաջելով Բայտի քաղաքապետի հրաւերին, Տէր Միւռն եւ Ծխական Խորհուրդի անդամներ մասնակցեցան Քաղաքապետարանի կազմակերպած Հայոց Ցեղասպանութեան 110րդ ամեակի յուշահանդէսին, որ տեղի ունեցաւ Մետօպանքի Մեմօրիլը Փարքի Խաչքարին շուրջ: Տէր հայրը կատարեց եկեղեցական արարողութիւնը:



Կիրակի 11 Մայիսին, Տեր Միլոնն օրհնեց 18 ուրարներ, որոնք նուիրուած էին Հայկ եւ Նուշիկ Օհանեաններու կողմէ, որմէ ետք պատարագեց եւ քարոզեց Կարմիր Կիրակիի մասին: Յընթացս Պատարագի, Տեր հայրը օրհնեց նաեւ Ծխական Խորհուրդի նոր գրասենեակը եւ անոր կահոյքի նուիրատու Տեր եւ Տիկին Գեորգ եւ Մարինա Զափրագեանները: Յաւարտ Պատարագի, եկեղեցւոյ շրջափակին մէջ, բոլոր ներկաները ըմբոշխնեցին Տիկնանց Յանձնախումբի հիւրասիրութիւնը Մայրերու Օրուան առթիւ:

Երեքշաբթի 13 Մայիսին, Տեր Միլոնն, Երեցկնոջ եւ Ծխական Խորհուրդի երկու անդամներու ընկերակցութեամբ, ներկայ գտնուեցաւ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ կազմակերպած Կոմիտասի նուիրուած ձերնարկին գոր ներկայացուց Հայրենի արուեստագէտ Հայկ Պետրոսեան:

Ուրբաթ, 17 Մայիսին, ընդառաջելով կարգ մը ընտանիքներու խնդրանքին, Փայն Կրով գերեզմանատան հայկական բաժինին մէջ, Տեր Միլոնն աղօթեց այնտեղ հանգչող հանգուցեալներու հոգիներուն խաղաղութեան համար:



Չորեքշաբթի 21 Մայիսին, Տեր Միլոնն, Ծխական Խորհուրդի անդամներ եւ Կալա Երեկոն կազմակերպող յանձնախումբի անդամներ, Սիտնիի օդակայանին մէջ դիմաւորեցին երգիչ Յակոբ Մկրտիչեանն ու երգեհոնահար Արտաշէս Մովսիսեանը:

Ուրբաթ 24 Մայիսին, Սուրբ Երրորդութիւն Եկեղեցին կազմակերպեց Տարեկան Բարեսիրական Կալա Երեկոն Կրանտ Փարատիսօ հանդիսասարահին մէջ: Երեկոն խանդավառեց անուանի երգիչ Յակոբ Մկրտիչեանը, գոհ պահելով հանդիսականները:



Երեքշաբթի 27 Մայիսին, ՄԵ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը կազմակերպեց ճաշկերոյթ երգիչ Յակոբ Մկրտիչեանի, երգեհոնահար Արտաշէս Մովսիսեանի եւ Կալա երեկոն կազմակերպիչ յանձնախումբին ի պատիւ: Ներկաները մեծապէս գնահատեցին Տիկնանց Յանձնախումբի որակաւոր հիւրասիրութիւնը:



Չորեքշաբթի 28 Մայիսին, Տէր Միւռն եւ Ծխական Խորհուրդի երկու անդամներ մասնակցեցան Դրօշակի արարողութեան, կազմակերպուած Բայտի քաղաքապետարանին կողմէ՝ Փաթնի արուարձանին մէջ: Արարողութիւնը նուիրուած էր Հայաստանի Առաջին Հանրապետութեան հաստատման 107-ամեակին:

Հինգշաբթի 29 Մայիս- Տէր Միւռն պատարագեց Համբարձման տօնին առթիւ: Երեկոյեան, ընկերակցութեամբ Ծխական Խորհուրդի երկու անդամներու, ան մասնակցեցաւ նահանգային խորհրդարանին մէջ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած հայկական խաչքարին առջեւ հոգեւոր եւ ծաղկեպսակներու զետոյման արարողութեանց, որոնց յաջորդեց դասախօսութիւն Փրէսթըն Սթանլի

սրահին մէջ, Փրոֆէսըր Պրուս Սթէյթի կողմէ: Ձեռնարկը յաջողապէս կազմակերպուած էր Հայ Դատի Յանձնախումբին նախաձեռնութեամբ:

Մարի Զլէր Թորոսեան

ՕՔԼԱՆՏ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ



Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայկական եկեղեցին և Նոր Զելանտայի Հայկական Միութեան վարչութեան եւ Աւրստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան գործակցութեամբ, Ապրիլ 9-ին, Օքլանտի մէջ կազմակերպուեցաւ «Ողորմութեան ոսկէշղթայ (Golden Chains of Mercy)» պատմական վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւնը: Այս պատմութիւնը, Նոր Զելանտացի և աւստրալացի հերոսներու և սովորական մարդոց մասին է, որոնք կատարած են արտասովոր գործեր, արձագանքած ցեղասպանութեան ենթարկուած Հայ, Յոյն և Ասորի ժողովուրդներու յուսահատ ճիչերուն և աշխարհով մէկ,

օղակ առ օղակ, տարածած «ողորմութեան ոսկեշղթան»: Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան նախագահ եւ գործադիր տնօրէն, Վերապատուելի Դոկտ Գրիգոր Եումուշաճըքեան և Օքլանտի Համալսարանի քաղաքագիտութեան և միջազգային յարաբերութեանց դասախօս Դոկտ Մարիա Արմուտեան ներկայացուցին իրենց բացատրողական խօսքերը:

Ֆիլմի ցուցադրութեան ներկայ էին աւելի քան 80 Հայ եւ ոչ Հայ անձինք: Ձեռնարկը թողուց մեծ տպաւորութիւն բոլոր ներկաներուն վրայ:



22 Ապրիլին, Նոր Զելանտայի Հայկական Միութիւնը նշեց Հայոց Ցեղասպանութեան 110րդ տարելիցը Օքլանտի Հիւսիսային շրջանի Մէտոուտի համայնքային սրահին մէջ: Կատարուեցաւ աղօթք եւ մոմավառութիւն Կեդրոնին շրջափակին մէջ զետեղուած Հայկական Այբուբենին նուիրուած յուշակոթողին առջեւ:

Օքլանտի Հայ համայնքը ցաւով կորսնցուց Աւագ Սարկաւազ Մարկոս Իսկէնտէրեանը: Հանգուցեալին բաժանումը ոչ միայն սուգի մատնեց իր ընտանիքն ու բարեկամները, այլ Օքլանտի համայն Հայ համայնքը: Բարեշնորհ սարկաւազը աւելի քան 60 տարիներ նուիրեալ զինուորը եղած է Հայ եկեղեցւոյ, հոն ուր բնակած է: Շնորհիւ իր անսակարկ նուիրումին, կարելի եղած է հիմնել Օքլանտի Զուարթնոց Երգչախումբը:

Յիշատակն ար-դարոյն օրհնութեամբ եղիցի:

Օրիորդ Անժէլ Միհրանեանի յուղարկաւորութեան առիթով Օքլանտ ժամանեցին Սիտնիի Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանն

ու Բարեշնորհ Վարդան Սրկ Էլմասեանը:

Շաբաթ, 24 Մայիսի երեկոյեան, St John the Baptist Anglican Church-ի մէջ պատարագեց եւ քարոզեց Արժանապատիւ քահանայ հայրը, երգեհոնի ընկերակցութեամբ եւ դպրապետութեամբ Վարդան Սարկաւազի, մասնակցութեամբ Զուարթնոց Երգչախումբի անդամներու: Սարկաւազութիւնը կատարեց Նշան Սրկ Պասմաճեան, բուրվառակիր՝ Յակոբ Երլտըզեան: Տէր Աւետիսի քարոզը կը վերաբերէր Քրիստոսի Յարութեան, տրուած ըլլալով որ Յարութեան Պատարագ տեղի չէր ունեցած Զատկուան օրը:

Յաւարտ Պատարագի տեղի ունեցաւ թեթեւ ընթրիք:

Հիւրերը Սիտնի վերադարձան Կիրակի 25 Մայիսի վաղ առաւօտուն:

Զաւէն Փանոսեան





ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԱՐՄԷՅ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԳԼԽԱՒՈՐԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մայիս 4-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ընդունեց Մարսէլի քաղաքապետ Պենուա Պայանի գլխավորած պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին քաղաքային իշխանութեան և հայ համայնքի ներկայացուցիչներ:

Հանդիպման ներկայ էր Ֆրանսայի դեսպան Օլիվիէ Տը Կոտինյին: Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ այս այցը դրսևորումն է հայ-ֆրանսական բարեկամութեան և Ֆրանսայի կողմէ ցուցաբերուող զօրակցութեան:

Հայոց Հայրապետը գոհունակութեամբ արձանագրեց, որ Հայոց ցեղասպանութիւնը վերապրած մեծ թիւով հայորդիներ ապաստան են գտած նաև Մարսէլ, ուր կազմակերպած են իրենց ազգային-հոգևոր կեանքը եւ օգտակար հանդիսացած երկրի յառաջընթացին:

Քաղաքապետը անդրադարձաւ հայ-ֆրանսական պատմական առնչակցութիւններուն, կարևորեց հայ համայնքի ներդրումն ու շարունակական ներգրաւուածութիւնը քաղաքի զարգացման գործին մէջ:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ ՊԵՆԱՌՈՒՄԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

Մայիս 7-ին Վեհափառը ընդունեց իր դիւանագիտական առաքելութիւնը աւարտող Պելա-ռուսի դեսպան Ալեքսանդր Կոնյուկը:

Նորին Սրբութիւնը գնահատեց դեսպանին Հայաստանի մէջ իրականացուցած առաքելութիւնը յուսալով որ իր հետագայ ծառայութեան մէջ պիտի շարունակէ ջանքեր ներդնել յանուն հայ-պելառուսական յարաբերութեանց զարգացման:

Դեսպանը անդրադարձաւ իր ջերմ տպաւորութեանց և հետագայ ծրագրերուն:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՌԻԴԵՐՁԸ
ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Միրելի ժողովուրդ ի հայրենիս և ի սփիւռս,

Հայրենական մեծ պատերազմում յաղթանակի յոբելեանական 80-ամեակը և Շուշիի ազատագրման ու Արցախի պաշտպանութեան բանակի ստեղծման տարեդարձները նշում ենք մեր ժողովրդի համար թանկ ու կարևոր յիշատակներով:

Իրաքանցուր յաղթանակ ձեռք է բերում հաւատքով, անդուլ մաքառումով և փորձութիւնների դիմակայումով: Բազմադարեայ մեր պատմութեան ընթացքում, մեր ժո-



ղովուրդը անձնագոհաբար պայքարել է իր անկախ և արժանապատիւ կեանքի համար՝ մշտապէս ձգտելով արդարութեան ու խաղաղութեան հաստատման: Այս գիտակցութեամբ են հարիւր հազարաւոր հայորդիներ Խորհրդային Միութեան այլ ժողովուրդների հետ մարտնչել ընդդէմ ֆաշիզմի, յանուն ապահով ու բարօր աշխարհի հաստատման: Այս նոյն գիտակցութեամբ է ազգս նաև պաշտպանել արցախահայութեան հարազատ հողում անկախ ու անվտանգ ապրելու իրաւունքը:

Միրելիներ, այսօր էլ մեր ազգին ու հայրենիքին պատուհասած արհաւիրքների՝ Արցախի հայաթափման, Հայաստանի առջև ծառացած մարտահրաւերների յանդիման մենք պիտի աննկուն մնանք՝ մեր ոգու արիւթեամբ, հաւատքի ամրութեամբ, լուսաւոր ապագայի տեսիլքով և միշտ յիշենք, որ նշանակալի յաղթանակներ կերտել ենք միայն միասնականութեամբ, հայրենիքի հանդէպ սիրով ու նուիրուածութեամբ: Արդ, խոնարհում բերելով մեր հերոսների անմար յիշատակի առջև՝ ներշնչուենք նրանց պայծառ օրինակով և համատեղ ջանքերով ու միմեանց սատարումով շէնացնենք մեր կեանքի անդաստանը նոր ձեռքբերումներով և ազգաշահ իրագործումներով:

Յաղթանակի և խաղաղութեան տօնի առիթով Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը և շնորհաւորանքն ենք յղում Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, Արցախեան պատերազմի մասնակիցներին և աշխարհասփիւռ համայն մեր ժողովրդին:

Աղօթք ենք բարձրացնում աշխարհի խաղաղութեան, մեր հայրենիքի ու ժողովրդի անվտանգ, ապահով ու բարօր կեանքի համար և հայցում Բարձրեալից, որ այլևս մարդկային կեանքում տեղ չգտնեն ֆաշիզմի սոսկալի դրսևորումները, աղիտալի պատերազմներ ու արհաւիրքներ: Թող յարուցեալ Տիրոջ շնորհներն ու օրհնութիւնը լինեն մեզ հետ այսօր և միշտ և յաւիտեանս. ամէն:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԱՅՅԵԼԵՑ
«ՅԱՂԹԱՆԱԿ» ԶԲՕՍԱՅԳԻ**

Մայիս 9-ին, Յաղթանակի ու Խաղաղութեան տօնին առիթով, Վեհափառ միաբաններու ուղեկցութեամբ այցելեց «Յաղթանակ» զբօսայգի՝ իր յարգանքի տուրքը մատուցելու Հայրենական մեծ պատերազմին և Արցախեան հերոսամարտերուն զոհուածներուն անմար յիշատակին:

Անյայտ զինուորի յուշակոթողին մօտ ծաղկեպըսակի զետեղումէն ետք, Վեհափառ Հայրապետը



աղօթք բարձրացուց հայրենիքի համար իրենց կեանքը ընծայաբերած քաջորդիներու հոգիներու խաղաղութան համար:

**ՄԱՅԻՍ 10-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ
ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**

ՀՀ դատաւորներու միութեան նախագահ Ալեքսանդր Ազատեանը, հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին օրհնութիւնը, ներկայացուց համաժողովին մասնակից շուրջ 35 եւրոպական երկիրներէ Հայաստան ժամանած պատուիրակները և տեղեկութիւն տուաւ համաժողովի աշխատանքներուն մասին:

Այնուհետև, Վեհափառը ուրախութիւն յայտնելով Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին անոնց այցի առիթով, իր խօսքին մէջ անդրադարձաւ դատաւորի կարևոր առաքելութեան աշխարհի մէջ արդարութեան հաստատման, մարդու իրաւունքներու եւ ազատութեան պաշտպանութեան ծիրերէն ներս: Ան պատգամեց դատաւորներուն, որ իրենց ծառայութեան ընթացքին ուղենիշ դարձնեն աւետարանական ճշմարտութիւնը, որ իրական արդարութիւնը կը բխի առ Աստուած հաւատքէն և կը դրսևորուի սիրով:

Խօսելով հայ ժողովուրդին առջև ծառացած մարտահրաւերներուն մասին՝ Նորին Սրբութիւնը կարևորեց միջազգային դատական հանրութեան անդրադարձը բռնի տեղիանուած արցախահայերու արդար իրաւունքներու պաշտպանութեան, Ադրբեջանի կողմէ գերեզմարուած հայորդիներու նկատմամբ իրականացող շինծու դատաւարութեան, ինչպէս նաև Արցախի հոգևոր, մշակութային ժառանգութեան ոչնչացման և իւրացման գործողութիւններուն:



ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Վեհափառին հայրապետական տնօրինութեամբ կատարուեցան միաբաններու նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Յարութիւն վարդապետ Կիրակոսեանը, Մայիսի 12-էն նշանակուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայորդեաց տների հոգևոր տեսուչ՝ ազատուելով Լուսարարապետի պաշտոնակատարի պարտականութիւններէն:

Հոգեշնորհ Տ. Անանիա վարդապետ Ծատուրեան Մայիսի 12-էն նշանակուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Լուսարարապետ՝ ազատուելով ԱՄՆ հայոց Արևմտեան թեմին մէջ ստանձնած հոգևոր ծառայութենէն:

Հոգեշնորհ Տ. Ռուբեն վարդապետ Զարգարեան Մայիսի 15-էն նշանակուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրէն՝ ազատուելով Քրեակատարողական հիմնարկների հոգևոր տեսուչի պարտականութիւններէն:

Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Պողոսեան Մայիսի 15-էն նշանակուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրեակատարողական հիմնարկների հոգևոր տեսուչ՝ ազատուելով Սուրբ Խոր Վիրապ վանքի վանահօր պարտականութիւններէն:

ԿԱՐԳԱԼՈՅԾ Է ՀՌԶԱԿՈՒԱԾ Տ. ԶԱԻՆՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵԱԶԻՉԵԱՆԸ

Վեհափառի հայրապետական տնօրինութեամբ կարգաւոյժ է հռչակուած Վիրահայոց թեմի Մառնեոյի շրջանի հայոց հոգևոր հովիւ Տ. Զաւէն վարդապետ Եազիչեանը:

Կարգաւուծման հիմք ծառայած են Վիրահայոց թեմի առաջնորդ Գերշնորհ Տ. Կիրակոս եպիսկոպոս Դաւթեանի դիմումը և Կարգապահական Յանձնախումբի եզրակացութիւնը Զաւէն վարդապետ Եազիչեանի հոգևոր ծառայութեան վայրը ինքնակամ լքելուն պատճառով:

Կարգաւոյժ եկեղեցականն այսուհետեւ կը դասուի աշխարհականներու շարքին՝ Սարգիս Եազիչեան աւագանի անունով:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԶԵՌԱՍԲ ՕԾՈՒԵՑԱԻ ՊԵԼԱՌՈՒՍԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄԻՆԱՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայիս 17-ին Վեհափառը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմին հրաւերով, մեկնեցաւ Մինսք հայկական նորակառոյց եկեղեցոյ օծման առիթով:



դումէն ետք աղօթք բարձրացուց Հայրենական մեծ պատերազմին զոհուած զինուորներու հոգիներուն խաղաղութեան համար:

Նորին Սրբութեան շքախմբին մաս կը կազմէին Տ. Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեանը, Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրեանը, Տ. Գարեգին վարդապետ Համբարձումեանը, գաւազանակիր Տ. Եսայի արքեպիսկոպոս Գրիգորեանը, յանձնակատար Տ. Գրիգոր արքեպիսկոպոս Մինասեանը, Տ. Վահրամ աւագ քահանայ Մելիքեանը և Տ. Կոմիտաս քահանայ Ղեւոնդեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցութեամբ պետական ու թեմական պաշտօնէութեան, այցելեց Մինսքի Յաղթանակի հրապարակ, ուր յուշարձանին առջև ծաղկեպսակի զետե-

Մայիս 18-ին, Վեհափառ շքախումբին ու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսեանի ուղեկցութեամբ մեկնեցաւ նորակառոյց եկեղեցի, ուր « Հրաշափառ»ով մուտք գործեց, օրհնելով այս յիշարժան առիթով Պելառուսի տարբեր համայնքներէն Մինսք ժամանած հայորդիները, ապա սկսաւ Պելառուսի առաջին հայկական եկեղեցւոյ օծման արարողութիւնը: «Հրաշափառ» շարականով խորան բարձրացուեցաւ Սրբալոյս Միւռնը, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց Սուրբ Սեղանի օծումը: Ապա Եզրաս և Նաթան արքեպիսկոպոսները օծեցին չորս աւետարանիչներու անուններով խորանին սիւները, իսկ Արշակ արքեպիսկոպոս՝ մկրտութեան սուրբ աւագանը: Աւարտին՝ Վեհափառ Հայրապետը նորակառոյց եկեղեցին կոչեց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին անունով:

Իր պատգամին մէջ Նորին Սրբութիւնը գոհութիւն մատուցեց Աստուծոյ այս բարեպատեհ առիթին համար, իր սերն ու շնորհաւորանքները փոխանցելով ներկաներուն: Իր խօսքին մէջ ան գնահատանքով արձանագրեց, որ Պելառուսի Հանրապետութեան իշխանութիւններու բարեացակամ վերաբերմունքին շնորհիւ հնարաւոր դարձաւ եկեղեցւոյ վեր խոյացումը:

«Առանձնակի գոհունակութիւն է Հայրապետիս համար արձանագրել, որ մեր ժողովուրդների յարաբերութիւնները խարսխուած են քրիստոնէական ինքնութեան ընդհանուր արժէքների, բարեկամութեան, հայրենիքի ու ընտանիքի աւանդական ընկալումների, ինչպէս և միասնական մաքառումների ու սխրանքների թանկ յիշատակների վրայ», - ըսաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ յոյս յայտնելով, որ Պելառուսի մէջ բնակող հայորդիներու բարի անունն ու վարկը և գործունէութիւնը առաւել պիտի սերտացնեն երկու ժողովուրդներու բարեկամական կապերը:

Նորին Սրբութիւնը նաև անդրադարձ կատարեց Խաչի յատնութեան տօնի խորհուրդին և Տէրունական Խաչի նշանակութեան: *«...Խաչը քրիստոնէաներիս համար հոգևոր զէնք է ընդդէմ չարի: Խաչը յանձնառութիւն է՝ արիաբար գործելու յանուն ճշմարտութեան, ազատութեան ու արդարութեան...»:* ըսաւ ան, ընդգծելով, որ կեանքի բոլոր հանգամանքներուն մէջ Խաչը Քրիստոսի հետ ըլլալու և Անոր վկայելու, Անոր պատուիրաններով ապրելու ճանապարհն է: Անդրադառնալով հայ ժողովուրդի առջև Արցախի բռնազավթման հետևանքով ծառացած մերօրեայ մարտահրաւերներուն՝ Նորին Սրբութիւնը հաստատեց ըսելով. *«Մեր ժողովուրդը բազմիցս հալածուել է, ունեզրկուել, ցեղասպանուել, հայրենիքից բռնի տեղահանուել: Սակայն «Խաչ քո եղիցի մեզ ապաւեն, Տէր Յիսուս» սրտառուչ աղօթքը շուրթերին, առ Տէրը հաւատով շնորհ է գտել վերապրելու և ամենուր բարեկամ ազգերի ու երկրների զօրակցութեամբ ոտքի կանգնելու և իր նոր կեանքը կերտելու: Այսօր էլ փորձութեան մէջ են մեր հայրենիքն ու հայրենաբնակ ժողովուրդը:*



Բռնագավթված և հայաթափուած է Արցախը, անապահով են Հայաստանի սահմանները: Աղբրեջանում ապօրինաբար պահուում են հայ ռազմագերիներ և Արցախի պատանդաուած ղեկավարութիւնը, իւրացման և ոչնչացման վտանգի առջև է Արցախի հոգևոր մշակութային բազմադարեայ ժառանգութիւնը:

Գիտենք, որ այս վշտագին իրողութիւններով խռովուած են նաև ձեր հոգիները, սակայն հաւատուում ենք, որ արդարութիւնը մեր ժողովրդի նկատմամբ պիտի վերականգնուի, և առ Քրիստոս հաւատով կարող պիտի լինենք յաղթահարել ներկայ բոլոր նեղութիւններն ու դժուարութիւնները: Նորաօծ այս եկեղեցին իր հոգևոր առաքելութեամբ բարձրօրէն հնչեցնելու է սիրոյ և խաղաղութեան կոչը՝ ընդդէմ հակառակութիւնների, թշնամանքի ու չարականութեան, և ազդու պատգամը՝ համերաշխ գոյակցութեան ու համագործակցութեան: Այս տաճարը կոչուած է զօրացնելու ձեր հաւատքն առ Աստուած, ամրապնդելու ոգին լաւատեսութեան և յոյսը լուսաւոր գալիքի», - նշեց Վեհափառ Հայրապետը, յորդորելով աստուածպաշտութեան ու ազգանւիրումի նախանձախնդրութեամբ պայծառացնել սրբավայրը, որը պատուարն է Պելառուսի հայորդիներու միասնութեան, երաշխաւորը անոնց ինքնութեան և ազգային-հոգևոր արժէքներու պահպանութեան:

Եկեղեցւոյ օծման առիթով Վեհափառը իր օրհնութիւնն ու գնահատանքը յայտնեց Եզրաս արքեպիսկոպոսին եւ նորանշանակ հոգևոր հովիւ Տ. Սարգիս քահանայ Զոփուրեանին:

Նորին Սրբութիւնը նաև հայրապետական իր սերն ու օրհնութիւնը բերաւ բարերար հայորդիներուն՝ ի մասնաւորի եկեղեցւոյ հիմնադիր բարերարներ տիարք Արթուր և Մարեն Գրանց եղբայրներուն, հովուատան և հայորդեաց տան բարերար տիար Վաղիմ Ավանեսեանին և աստուածահաճոյ գործին աջակցած բոլոր անձանց:

Արարողութեան աւարտին, Նորին Սրբութիւնը նորաօծ տաճարին ընծայեց սրբանկար՝ Խաչելութեան պատկերով, նորակառոյց եկեղեցւոյ բարերարներ Գրանց Մարենին և Ավանեսեան Վաղիմին շնորհեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուոյ բարձր քանշաններ, իսկ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսեանին ընծայեց պանակէ:


Այնուհետև Եզրաս Սրբազան մատուցեց Պատարագ:

Օծման արարողութեան ներկայ էին Պելառուսի Կրօնի գործերով և ազգութիւններու հարցերով Նախարարին յանձնակատար Ալեքսանդր Ռումակը, Համայն Պելառուսի Պատրիարքական փոխանորդ, Մինսքի և Զաւլաւսկի մետրոպոլիտ Վենիամինը, պետական այրեր, քոյր Եկեղեցիներու և կրօնական յարանուանութիւններու ներկայացուցիչներ, ազգային բարերարներ, թեմական խորհուրդի անդամներ, հայրենիքէն և տարբեր այլ երկիրներէ ժամանած ուխտաւոր հայորդիներ:

Սուրբ Պատարագի աւարտին կատարուեցաւ մատաղի օրհնութիւն, օրը նշանաւորուեցաւ նաև ազգագրական պարերու կատարմամբ:

Նոյն օրը տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ, որու ընթացքին Հայրապետական օրհնութեան գիրեր տրուեցան կառուցման իրենց աջակցութիւնը բերած հայորդիներուն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՅԱԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ և ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԱՄԻՈՑ ԵՄ ԴԵՍՊԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ



Վեհափառը ընդունեց Եւրոպական Միութեան Արևելեան Եւրոպայի և Կեղրոնական Ասիոյ դեսպաններու տարածաշրջանային սեմինարին մասնակիցները:

Պատուիրակութեան ղեկավար, ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը Նորին Սրբութեան ներկայացուց դեսպանները եւ ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց հաւաքին մասին:

Իր խօսքին մէջ Վեհափառը նշեց, որ դեսպանները թէ իրենց երկիրներուն, թէ ծառայութեան վայրերուն մէջ վստահաբար առիթ ունեցած են շփուելու հայ համայնք ներու հետ, ծանօթանալու

հայ ժողովուրդի ազգային ասանդությունն ու դաւանած արժէքներուն՝ յաւելելով, որ սեմինարի կազմակերպումը Հայաստանի մէջ առիթ պիտի դառնայ աւելի լաւ ճանաչելու երկիրն ու անոր բազմադարեայ ժառանգութիւնը, նաեւ՝ հաղորդ դառնալու տիրող դժուարին կացութեան: Ան նաեւ անդրադարձաւ հայ ժողովուրդին առջն ծառացած անվտանգային մարտահրաւերներուն, Արցախի բռնազավթման, հայրենազրկուած արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան և Ադրբեյջանի մէջ մինչ օրս պահուող հայ գերիներու վերադարձման խնդիրներուն, նաև՝ Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգութեան ոչնչացման ու իւրացման փաստերուն՝ ընդգծելով տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան վերականգնման անհրաժեշտութիւնը: Նորին Սրբութիւնը կարևորեց ԵՄ երկրներու ու կառոյցներու կողմէ աւելի գործուն քայլերու ձեռնարկումը Ադրբեյջանի վարած հայատեաց քաղաքականութեան առնչութեամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Մայիսի 22-ին Վեհափառը ընդունեց եկեղեցականներու վերապատրաստման դասընթացներուն մասնակից տարբեր թեմերէ ժամանած հոգևորականները:

Վերապատրաստման ծրագրերու տնօրէն Գերաշնորհ Ս. Վահան եպիսկոպոս Յովհաննէսեանը, ամփոփելով ծրագրի 2023-2025թթ. ընթացիկ փուլը, որուն մասնակցած են շուրջ 400 անձեր, անդրադարձաւ դասընթացներու օգտակարութեան: Սրբազանը երախտագիտութիւն յայտնեց Վեհափառին եւ ծրագրին մասնակից հոգևորականներուն:

Հայոց Հովուապետը գոհունակութիւն յայտնեց արձանագրուած արդիւնքներուն առնչութեամբ, ընդգծելով աստուածաբանական

գիտելիքներու վերաթարմացման, հովուական փորձառութեան փոխանակման, ինչպէս նաև Եկեղեցւոյ և հասարակութեան առջն ծառացած մարտահրաւերներուն ու զանոնք յաղթահարելու ուղիներու քննարկումներու կարևորութիւնը:

Վեհափառը իր գնահատանքը բերաւ Վահան Սրբազանին և ծրագրերու փոխտնօրէն Ս.



Շնորհք աբեղայ Սարգսեանին: Ան տեղեկացուց, որ յառաջիկայ դասընթացները պիտի կազմակերպուին ըստ տեսական ու գործնական աստուածաբանութեան թեմաթիկ ուղղութիւններու մերօրեայ մարտահրաւերներուն և հոգևոր սպասաւորութեան արդի պահանջներուն համապատասխան: Ամենայն Հայոց Կաթողիկոսը քահանայ հայրերուն պատգամեց կոչման բարձր գիտակցութեամբ և անվերապահ նուիրումով շարունակել իրենց ծառայութիւնը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ ԱՐԶԱԳԱՆՔԸ ԿՈՎԿԱՍԻ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԵՂԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Պաքուի մէջ կայացած Ղազիններու խորհուրդի նիստի ընթացքին, Կովկասի մահմետականներու վարչութեան նախագահ Շէյխ-ուլ-խսլամ Ալլահշուքիւր Փաշազատէն, ստանձնելով ադրբեյջանական քարոզչամեքենայի կեղծիքի տարածման դերը, հերթական անգամ աստելութեամբ ու թշնամանքով թիրախաւորած է Հայ ժողովուրդին ու Հայ Եկեղեցին:

Փաշազատեն յայտարարած է, թե իբր Հայաստանի և տարածաշրջանին մէջ տասնեակ դարեր գործող հայկական սրբավայրերը, անգամ 1700-ամեայ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, կը գտնուին «պատմական աղբրեջանական հողերուն մէջ», և հայերը որպէս թէ «իւրացուցած են» այդ տարածքները: Անհեթեթ պնդումներու շարքը Փաշազատեն կ'եզրափակէ Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացնելով որպէս սպառնալիք տարածաշրջանի երկիրներուն համար:

Զաւեշտալի կը թուի, որ Խորհրդային իշխանութիւններու ազգաշինարարութեան արդիւնքին մէջ 1930-ական թթ. երկրորդ կէսին «աղբրեջանցի» էթնոնիմ ստացած ժողովուրդի հոգևոր առաջնորդը կը փորձէ վիճարկել պատմականութիւնը հայ ժողովուրդին, որուն հազարամեակներու ստեղծագործ կեանքի ու հոգևոր-մշակութային ժառանգութեան արժէքն ու պատկանելիութիւնը համընդհանուր ճանաչում ստացած իրողութիւններ են: Առաւել քան զարմանալի է, որ այլոց արժէքներու իւրացման մէջ հայ ազգին ուղղումը մեղադրանքները կը ներկայացնէ երկրի մը ներկայացուցիչը, որուն պետութեան անուանումն իսկ իւրացուած է այլ երկրէ ու ժողովուրդէ:

Նոյն աժան գործելաժող նաև Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմի անունին շուրջ Փաշազատէի կատարած շահարկման հիմքերը: Ի գիտութիւն, պէտք է ընդունիլ, որ Դոնի Ռոստովի մերձակայ բնակավայրերը անուանուած են «Նոր Նախիջևան» նոյն ցարական Ռուսաստանի իշխանութիւններու որոշմամբ՝ որպէս յարգանքի արտայայտութիւն պատմականօրէն հայկական Նախիջևանէն այդ տարածքը տեղափոխուած հայերու:

Աղբրեջանի հոգևոր առաջնորդի հրապարակային խօսքերուն մէջ շարունակաբար տեղ գտնող թշնամանքի ու կեղծարարութեան նման դատապարտելի դրսևորումները ինքնին վկայութիւնն են այն իրողութեան, որ Աղբրեջանը ինքն է, Փաշազատէի խօսքերով ըսուած, սպառնալիք տարածաշրջանի հարևան երկիրներուն համար:

Եւ վերջապէս, հարկ է միանգամընդմիջտ արձանագրել, որ սուտն ու կեղծիքը երբեք չեն կրնար ճշմարտութեան վերածուիլ, որքան ալ յաճախ ու խանդավառութեամբ կրկնուին:

ԶՈՒԻՑԵՐԻՈՑ ՊԵՌՆ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ՄԵԿՆԱՐԿՈՒԵՅԱԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԻՈՐ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջարկով, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ) և Զուիցերիոյ Բողոքական Եկեղեցին Մայիսի 26-28-ը Պեռն քաղաքին մէջ կազմակերպած են « Կրօնական Ազատութիւն. հայկական հոգեւոր, մշակութային և պատմական ժառանգութեան պահպանումը Արցախի / Լեռնային Ղարաբաղի մէջ » խորագրով միջազգային համաժողովը: Մայիսի 27-ին համաժողովը բացուեցաւ Վեհափառին օրհնութեամբ և ուղերձով:

Նորին Սրբութիւնը իր գնահատանքը յայտնեց ԵՀԽ-ի գլխաւոր քարտուղար վերապատուելի Ճերրի Փիլլային, Զուիցերիոյ Բողոքական եկեղեցւոյ նախագահ վերապատուելի Ռիտա Ֆամոսին, ԵՀԽի վարչութեան անդամներուն, համաժողովի կազմակերպիչներուն և աջակիցներուն, որոնց ջանքերուն շնորհիւ անգամ մը եւս միջազգային հարթակէն կը բարձրաձայնուի Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի բռնազավթումէն յետոյ Հայ ժողովուրդին առջև ծառացած մարտահրաւերներուն մասին:



«21-րդ դարուն, երբ ազգերու ու պետութիւններու կեանքը պիտի նշանաւորուէր խաղաղութեան, համերաշխութեան ու արդարութեան հաստատմամբ, ցաւօք, ականատես ենք պատերազմներու, թշնամանքի ու ատելութեան հիմքի վրայ իրականացուող ցեղասպանական գործողութիւններու ու էթնիկ զտումներու, ինչպէս և կրօնական ազատութեան և մարդու հիմնարար իրաւունքներու ոտնահարման դատապարտելի դէպքերու: Այս արհաւիրքները վերապրեցաւ նաև մեր ժողովուրդը Թուրքիոյ ռազմական աջակցութեամբ Ադրբեջանի կողմէ Արցախի նկատմամբ իրականացած ագրէ-

սիայի ու ոճրագործութիւններու հետևանքով: 2020 թուականէն սանձազերծուած 44-օրեայ և ապա նաև 2023-ին լայնածաւալ ռազմական գործողութիւններու ընթացքին բռնազավթուեցաւ և ամբողջապէս հայաթափուեցաւ Արցախը: Գրաւուած են Հայաստանի Հանրապետութեան սահմանային կենսական նշանակութիւն ունեցող զգալի տարածքներ, խաղաղութեան պայմանագրի կնքման գործընթացին մէջ կը ներկայացուին նորանոր պահանջներ: Ադրբեջանը պատանդ կը պահէ Արցախի քաղաքական ղեկավարները, քաղաքացիական անձեր և ռազմագերիներ՝ իրականացնելով անոնց նկատմամբ ցուցարարական, շինծու դատաւարութիւն՝ միջազգային իրաւական նորմերու աղաղակող խախտումներով: Ակնյայտ է, որ այսօրինակ անօրինութիւններն ու նուաստացուցիչ դաժանութիւնները, պայմանաւորուած են բացառապէս ազգային պատկանելիութեամբ եւ հայատեացութեամբ, որը և պատճառ է ոտնձգութիւններու Հայ ժողովուրդի հոգևոր-մշակութային ժառանգութեան ու պատմական սրբավայրերու նկատմամբ»,-նշեց Հայոց Հայրապետը՝ ընդգծելով, որ արցախահայութիւնը դարեր շարունակ հայրենի իր երկրին մէջ, հաւատքով և իր ազգային ինքնութեան հաւատարիմ ոգիով, կերտած է իր արժանապատիւ գոյութիւնը, դպրութեան և արուեստի բարձրարժէք արարումներով նաև հարստացուցած մարդկութեան մշակութային գանձարանը:



Նորին Սրբութիւնը ցաւով արձանագրեց, որ Արցախի բռնազավթումէն ետք, առ այսօր կը շարունակուի Ադրբեջանի կողմէն հայկական հնագոյն յուշարձաններու, քրիստոնէական սրբավայրերու, բնակատեղիներու և գերեզմանոցներու բարբարոսաբար ոչնչացումը: Ադրբեջանը հայոց հնամենի նշանաւոր վանքերն ու եկեղեցիները իրենց ինքնութենէն զրկելու որդեգրած քաղաքականութեամբ աղուանական կը հռչակէ Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգութիւնը:

«Ադրբեջանի իշխանութիւնները կը շարունակեն անտեսել միջազգային հանրութեան կոչերը, կը հրաժարին իրագործելու Եւրախորհրդարանի 2022 թուականի «Լեռնային Ղարաբաղի մէջ մշակութային ժառանգութեան ոչնչացման մասին» N 2582 բանաձևի պահանջները, ինչպէս և կը մերժեն Արցախի հայկական յուշարձաններու վիճակին գնահատման ուղղութեամբ փաստահաւաք առաքելութիւն իրականացնելու ԵՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնութիւնը: Ադրբեջանի իշխանութիւններու հակահայկական

քարոզչության լծումը է նաև Կովկասի մահմեդականներու վարչության նախագահ Ալլահշուքի ր Փաշազատեն, որը օրեր առաջ հանդէս եկաւ ստահոդ յայտարարութիւններով», - յաւելեց Վեհափառ Հայրապետը, նշելով, որ Ադրբեջանի հայատեաց այս նոյն գործելաձով ժամանակին վայրագ ոչնչացման ենթարկուեցան Նախիջևանի հայկական սրբավայրերը, իսկ ճիշտ քսան տարի առաջ՝ 2005-ին, հողին հաւասարուեցան Նախիջևանի՝ Հին Ջուղայի շուրջ վեց հազար խաչքարերը:

«Մշակութային ոճրագործութիւնները ցաւալիօրէն չեն ճանչնար աշխարհագրական սահմաններ, և ամենուր են, այնտեղ, ուր կը խաթարուին մարդու և ժողովուրդներու իրաւունքները, կը դրսևորուին այլատեացութիւն և անհանդուրժողութիւն, կ'անտեսուին հոգևոր ժառանգութեան վսեմ արժէքն ու կարևորութիւնը: Մշակութային ժառանգութեան նկատմամբ իրականացուող ոճիրները արդարօրէն կը դիտարկուին ոչ միայն որպէս մէկ ազգի, այլ համամարդկային արժէքներու դէմ յանցագործութիւն:

Բարբարոսական այսօրինակ ոճրագործութիւններու անպատժելիութիւնը ամենաթողութեան մթնոլորտ կը ձևաւորէ ոչ միայն Ադրբեջանի մշակութակործան ոճիրները շարունակելու համար, այլ նաև նախադրեալներ կը ստեղծէ և քաջալերանք կը հանդիսանայ նմանատիպ և աւելի դաժան յանցագործութիւններու իրականացման աշխարհի այլ վայրերու մէջ», - ըսաւ Հայոց Հովուապետը՝ հաստատելով, որ մշակութային արժէքներու պաշտպանութիւնը բոլորին համար ոչ միայն նուիրական պարտաւորութիւն է, այլև ազգերու ու ժողովուրդներու պատմութեան, հաւատքի և ինքնութեան պահպանութեան հրրամայական:

Ապա դիմելով համաժողովի մասնակիցներուն՝ Նորին Սրբութիւնը ընդգծեց. «Արցախի հոգևոր, մշակութային եւ պատմական ժառանգութեան պահպանութեան հարցը աւելի քան երբևէ հրատապ է այսօր, երբ Արցախի բռնի տեղահանումը ժողովուրդը զրկուած է սեփական հողին վրայ ապրելու և արարելու, դարբերով իր հաւատքով կերտած մշակոյթը պահպանելու և զարգացնելու իրաւունքէն: Ժամանակակից աշխարհին մէջ պէտք չէ հանդուրժուին մարդկութեան ու մարդկայնութեան դէմ նման սոսկալի եղեռնագործութիւններ, ազատութեան, արդարութեան ու իրաւունքի հիմնասիւնները խարխլող արարքներ: Այո՛, ազգերու միջև հակամարտութիւնները պէտք է կարգաւորուին խաղաղ ուղիներով, արդարութեամբ ու փոխ-համաձայնութեամբ, ազգային ինքնութեան ու արժանապատւութեան յարգմամբ»:

Մեծապէս կարևորելով նման համաժողովներու անցկացումը՝ Հայոց Հայրապետը յոյս յայտնեց, որ միջազգային դերակատար երկրները և իրաւասու կառոյցները գործուն քայլեր կը ձեռնարկեն՝ ուղղուած Արցախի հոգևոր մշակութային ժառանգութեան պահպանութեան, արցախահայութեան՝ իրենց հարազատ բնօրրան անվտանգ վերադարձի, ազատ ու արժանապատիւ ապրելու արդար իրաւունքի վերականգնման և հայ գերիներու շուտափոյթ ազատ արձակման:

Աւարտին, Նորին Սրբութիւնը շնորհակալութիւն յայտնեց քոյր Եկեղեցիներուն, միջ-եկեղեցական կազմակերպութիւններուն՝ դժուարին իրավիճակի մէջ հայ ժողովուրդին ու Եկեղեցւոյ զօրակցելու և արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան հարցին մէջ հետևողականութիւն դրսևորելու համար՝ արդիւնաւոր ընթացք մաղթելով համաժողովի աշխատանքներուն:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**



Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ի հայրենիս և ի սփիւռս մեր ժողովրդի զաւակներին և շնորհաւորում Հանրապետութեան տօնի առիթով:

Այսօր ոգեկոչում ենք յիշատակները 1918 թ. մայիսեան հերոսամարտերի, մեր ժողովրդի դրսևորած աննկուն կամքի, միասնականութեան ոգու և քաջարի պայքարի, որի շնորհիւ հրոշակուեց Հայաստանի առաջին Հանրապետութիւնը: Դարերի ընդմիջումից յետոյ հայրենի հողում վերականգնուեց հայկական պետականութիւնը՝ արժանապատիւ ու ապահով

կեանք և լուսաւոր գալիք կերտելու տեսիլքով:

Այսօր, երբ մեր ժողովուրդը կանգնած է նոր փորձությունների առջև և աղէտալի պատերազմից ու Արցախի բռնազավթումից յետոյ կրում է արհաւիրքների ծանր հետևանքները, Մայիսի 28-ի խորհուրդը կրկին հնչեցնում է անբեկանելի ճշմարտութիւնը, որ ժողովուրդը կարող է յաղթանակել, երբ միաբանուած է մէկ նպատակով, մէկ ձգտումով ու բաղձանքով: Մեր անկախութիւնը մեր հայրերի սրբազան աւանդն է մեզ, որը պիտի փայփայենք և շարունակենք համատեղ ջանքերով շէնացնել մեր երկիրը, զօրացնել մեր պետականութիւնը:

Այս տօնական օրը աղօթում ենք աշխարհասփիւռ մեր ժողովրդի խաղաղութեան ու բարօրութեան, մեր բանակի հզօրութեան, մեր պետութեան անվտանգութեան ու առաջընթացի համար: Թող մեր նախնեաց սխրանքները ոգեշնչեն մեզ՝ հաւատալու մեր ուժերին, միաւորուելու հայրենիքի, ընդհանուր նպատակների շուրջ և համատեղ ջանքեր ներդնելու մեր ազգային շահերի և իրաւունքների պաշտպանութեան գործում:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհները, սէրը և ողորմութիւնը թող լինեն մեզ հետ և ամենքի, այսօր և միշտ. ամէն:

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ և
ԱՅՑ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ
ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ
ԱՌԻԹՈՎ**



Մայիս 28-ին, Հանրապետութեան տօնին առիթով, Միաձնաէջ Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Հանրապետական մաղթանք: Արարողութիւնը հանդիսապէտեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արտաքին յարաբերութիւններու և արարողակարգի բաժնի տնօրէն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Յովհաննիսեանը:

Հոգևորականաց դասը և ներկայ ժողովուրդը աղօթք բարձրացուցին առ

Աստուած Հայաստանի Հանրապետութեան անսասանութեան, խաղաղ և բարօր կեանքի համար:

Մաղթանքի աւարտին, Նաթան Սրբազան ընթերցեց Հանրապետութեան տօնի առիթով համայն հայութեան ուղղուած Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղերձը:

Նոյն օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, Գերաշնորհ Ս. Նաթան արքեպիսկոպոսի զըլխաւորութեամբ, այցելեցին Սարգարապատի յուշահամալիր, ուր Արմաւիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Սիոն արքեպիսկոպոս Ադամեանի, թեմի եկեղեցականներու ուղեկցութեամբ հոգեւորականները ծաղկեպսակ զետեղեցին յուշակոթողին առջև, ապա աղօթեցին մայիսեան հերոսամարտերուն զոհուած քաջորդիներու հոգիներու հանգստութեան համար:

ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Մայիս 29- Քրիստոսի Համբարձման տօնն էր: Այս տօնին կը յիշատակուի նաև 1441 թուականին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Աթոռը Միս քաղաքէն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական օրը:

Վեհափառին տնօրինութեամբ այս տօնը հոչակուած է նաև Սուրբ Էջմիածնի ուխտի օր:

